ԼՂԻՄ. ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՏԱՀԱՐ

Հոկտեմբերի 10-ին, մոտավորապես ժամը 21-ն անց 30 րոպեին Ստեփանակերտի ծայրամասում, Արմենավանում, արտակարգ պատահար է տեղի ունեցել: Նախնական տվյալների համաձայն, այդ ժամանակ այդտեղով անցնելիս է եղել Ավերյլովսկի հրշեջ տեխնիկական ուսումնարանի կուրսանտների ավտոշարասյունը, որը Շուշիից Կիրովաբադ էր ուղևորվում: Շինարարության վարչության մոտ շարասյունը քարկոծվել է: Դրան ի պատասխան կուրսանտները զենք են գործադրել, ինչի հետևանքով տեղի վեց հայ բնակիչներ վիրավորվել են և շտապ կարգով հիվանդանոց տեղափոխվել: Նրանցից մեկը հետո հիվանդանոցում մահացել է: Տեղնուտեղը պատահարի վայրն է մեկնել ԼՂԻՄ-ի ներքին գործերի վարչության և Ստեփանակերտի ներքին գործերի քաղաքային բաժնի քննչական-օպերատիվ խումբը:

Ինչպես հաղորդեցին հատուկ կառավարման կոմիտեում, մի քանի կուրսանտներ մարմնական թեթև վնասվածքներ են ստացել: Նրանց բուժօգնություն է ցույց տրվել Կիրովաբադում: Զենք գործադրած 12 կուրսանտներ թողնվել են Ստեփանակերտում պատահարի հետաքննության համար:

Քաղաքի բնակչությունը գտնում է, որ պատահարը իսկական պրովոկացիա է, և դրա համար մեղադրում է հատուկ շրջանի պարետության ղեկավարությանը: Բնակչությունը մասնավորապես պահանջում է բացատրություններ տալ, թե ինչու են կուրսանտները կրակել նաև քաղաքի կենտրոնում, այն է՝ Լենինի ու Կիրովի փողոցներում, որտեղ նրանց ոչ ոք չէր ապառնում: Մարդիկ հոռետեսորեն են վերաբերվում նաև այն բանին, որ կուրսանտների մեջ կան վիրավորներ, հակառակ դեպքում ինչո՞ւ նրանց բուժօգնություն ցույց չի տրվել Ստեփանակերտում: Մարզային կենտրոնի բնակիչներին հետաքրքրում է նաև այն հանգամանքը, որ զինվորական շարասյան անցնելու մասին չէին զգուշացված տեղական իրավապահ մարմինները, որոնք կկարողանային մեքենաների անվտանգ երթևեկությունը ապահովող համապատասխան միջոցներ ձեռնարկել:

Հատուկ կառավարման կոմիտեն և հատուկ շրջանի պարետությունը, իրենց հերթին, նույնպես այն կարծիքին են, որ դա պրովոկացիոն ձեռնարկում է եղել, սակայն զինծառայողների նկատմամբ՝ ուղիղ գիծ է դրվել լարվածությունը պահպանելու նպատակով:

Ո՞վ է նրանցից իրավացի: Պատասխանը պետք է տան հետաքննության արդյունքները:

Տեղի ունեցած ողբերգությունը բորբոքեց մարդկանց կրքերը, որոնք առանց այն էլ սուր բնույթ են ստանում Ղարաբաղի պրոբլեմի, «Հայկական ԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի շրջափակման անհապաղ վերացման հարցի նկատմամբ կենտրոնական իշխանությունների վերին աստիճանի տարօրինակ մոտեցման պատճառով: Այս կապակցությամբ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը պաշտպանում է ինքնավար մարզից և Հայաստանից ընտրված ժողովրդական դեպուտատների վարմունքը, որոնք ի նշան բողոքի, հեռացել էին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նիստերի դահլիճից:

— Ես կարծում եմ, որ մեր դեպուտատները ճիշտ են վարվել,— Արմենպրեսի թղթակցին ասաց Ստեփանակերտի արտադրական կոմբինատի ինժեներ Լիլյա Հարությունյանը:— Համբերությունը վերջ ունի: Երբ մի ամբողջ ժողովրդի ձայնին համառորեն չեն ուզում անեղ, մանավանդ ահավոր ողբերգություն տեսած ժողովրդի ձայնին, որին արձագանքեցին երկրագնդի գրեթե բոլոր երկրները, նրա ընտրյալներին ուրիշ ոչինչ չի մնում, բացի այդ կերպ վրճռական բողոք արտահայտելուց: Մեզ, հայերիս պետք չեն կեղծ խոստումներ: Մենք մինչև կոկորդներս կուշտ ենք բանավոր ողորմություններից: Հայ ժողովուրդը իր դարավոր պատմության մեջ գործով է ապացուցել իր սրբազան հավատարմությունը ինտերնացիոնալիզմի և առաջադիմության իդեալներին՝ լինի դա մասնավորապես հեղափոխական շարժման մեջ, Հայրենական մեծ պատերազմի դժնդակ տարիներին, թե սոցիալիստական արարման աշխատանքային առօրյայում: Նա նույնպիսի վերաբերմունք է պահանջում նաև իր նկատմամբ: Եթե կենտրոնական իշխանությունները ուզում են այսուհետև էլ ներել Ադրբեջանի բոլոր հակամարդկային ձեռնարկումները, խնդրեմ, միայն թե ոչ հայ ժողովրդի հաշվին:

— Ես անցել եմ պատերազմի ճանապարհներով, նայել եմ մահվան երեսին այն հաստատ հավատով, որ այն երկիրը, որտեղ ապրում են իմ զավակներն ու իմ ժողովուրդը, նրանց երջանիկ կդարձնի: Սակայն Լեռնային Ղարաբաղի պրոբլեմին առընչվող վերջին մեկուկես տարվա իրադարձությունները լրջորեն սասանեցին՝ իմ հավատը,— ասաց կուսակցության, պատերազմի և աշխատանքի վետերան, մարզի ավագագույն ժուռնալիստ Աբգար Դանիելյանը:— Ես մտածել անգամ չէի համարձակվի, որ Խորհրդային Միությունում խաղաղ ժամանակ մեր ժողովուրդը ֆիզիկական ու բարոյական ցեղասպանության կենթարկվի: Այսօր դա դառն իրողություն է: Ես կոմունիստ եմ, արդեն 72 տարեկան եմ: Եթե այդ օրը գտնվեի երկրի Գերագույն խորհրդի նիստերի դահլիճում, ապա կվարվեի նույն կերպ, ինչպես որ վարվեցին հայ դեպուտատները: Վստահ եմ, այդպես կվարվեին նաև մյուս բոլոր ժողովուրդների ներկայացուցիչները, եթե նրանց նկատմամբ նման աղաղակող, անարդարացի վերաբերմունք ցույց տրվեր:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Արմենպրեսի սեփական թղթ.
Ստեփանակերտ

Խմբագիր՝ Կ. Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ